Հաշվետվություն

2018թ. մարտի 14-ից 17-ը Ղազախստանի Հանրապետությունում (ք. Աստանա) անցկացվելիք ՀԱՊԿ արտակարգ իրավիճակների համակարգող խորհրդին (ԱԻՀԽ) կից աշխատանքային խմբի նիստի մասնակցության

1. **Անունը, ազգանունը.**

   Աղվան Սարգսյան,

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության միջազգային համագործակցության բաժնի պետ,

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Ղազախստանի Հանրապետություն, քաղաք Աստանա, 2018թ. մարտի 14-ից 17-ը:

4. **Հրավիրող կողմը.**

   Ղազախստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն:

5. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցություն Աստանայում անցկացվելիք ՀԱՊԿ արտակարգ իրավիճակների համակարգող խորհրդին (ԱԻՀԽ) կից աշխատանքային խմբի նիստին:

6. **Քննարկված թեմաները.**

   Քննարկվել են օրակարգային հետևյալ հարցերը.

- Միջազգային կազմակերպությունների հետ հետագա համագործակցության հեռանկարները,
- ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի 2016 թվականի հոկտեմբերի 14-ի «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների արտակարգ իրավիճակներին արձագանքելու մասին» որոշման կատարումը կազմակերպելու հարցը,
- ՀԱՊԿ ԱԻ ՀԽ 2018թ. միջոցառումների պլանում փոփոխություն կատարելու մասին,

- ՀԱՊԿ արագ արձագանքման ուժերի կորպուսի օպերատիվ խմբերի հրամանատարների ուսումնամեթոդական հավաքի մասին,
- ՀԱՊԿ արագ արձագանքման հավաքական ուժերին հանձնված ՀԱՊԿ անդամ պետությունների արտակարգ իրավիճակների կանխարգելման և արձագանքման ոլորտում լիազորված մարմինների ստորաբաժանումների հետ տակտիկական հատուկ վարժանքի անցկացման հարցը,
- Լայնածավալ արտակարգ իրավիճակների կանխարգելմանը կամ հետևանքների վերացմանն ուղղված ՀԱՊԿ անդամ պետությունների հավաքական արձագանքման կարգի վերաբերյալ կանոնակարգի նախագծի մշակման ընթացքի հարցը,
- ՀԱՊԿ ԱԻ ՀԽ հերթական նիստի անցկացման մասին:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Նիստի ժամանակ քննարկվել են.

- Երևանում կայանալիք <<ArmSecurity>> միջազգային ցուցահանդեսի անցկացման ժամկետի փոփոխման հարցը,
- ՀԱՊԿ ԱԻ ՀԽ աշխատանքային պլանի կատարման հարցը (2017-2018թ.թ.),
- Երևանում կայանալիք ՀԱՊԿ կոլեկտիվ անվտանգության արձագանքման ուժերի կորպուսի օպերատիվ խմբերի հրամանատարների ուսումնամեթոդական հավաքի հարցը,
- Ղազախստանում կայանալիք ՀԱՊԿ հատուկ նշանակության ուժերի կորպուսի արագ արձագանքման ստորաբաժանումների հատուկ տակտիկական վարժանքի հարցը,
- ՀԱՊԿ ԱԻ ՀԽ 11-րդ նիստի անցկացման և օրակարգի հարցերը:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Նիստի ընթացքում որոշվել է.

- ՀԱՊԿ ԱԻ ՀԽ հերթական XI նիստն անցկացնել Ալմաթիում, 2018թ.սեպտեմբերի 10-11,
- Միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին հրավիրել մասնակցելու նախատեսվող հավաքներին ու վարժանքներին,

- ՀՀ ԱԻՆ-ին առաջարկվում է դիմել ՀԱՊԿ քարտուղարություն <<ArmSecurity>> միջազգային ցուցահանդեսն անցկացնել 2019թ.,
- Հստակորեն հետևել ՀԱՊԿ ԱԻ ՀԽ աշխատանքային պլանի կատարմանը,
- Որոշումները համաձայնեցնել ՀԱՊԿ ԱԻ ՀԽ անդամների և ՀԱՊԿ քարտուղարության ղեկավարության հետ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Նիստը որոշեց.

բոլոր հարցերի վերաբերյալ առաջարկությունները, ըստ նիստի արձանագրության, ուղարկել ԱԻ գծով ՀԱՊԿ հմակարգող խորհրդի և ՀԱՊԿ քարտուղարության ղեկավարության համաձայնության՝ համաձայն նշված ժամկետների:

10. Գործուղվողը.

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի միջազգային համագործակցության բաժնի պետ Աղվան Սարգսյան:

11. Ստորագրությունը, ամսաթիվը.

19.03.2018թ.